ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «27» 09 2021 թ.

ՀՐԱՄԱՆ N 286Լ

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 211-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 02/11./32847-2021 հանձնարարականը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 4-ի «Կադաստրի կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2006 թվականի հունիսի 28-ի N 06-171-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 211-Լ հրամանով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ լրացումները.

1) 22-րդ կետը լրացնել նոր՝ 11-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11) Կոմիտեի գլխավոր քարտուղարը՝

ա. ապահովում է Կոմիտեի աշխատողներին սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը Կոմիտեում հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային, քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքի ներկայանալիս.

բ. ապահովում է սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը.

գ. սահմանում է «ա» և «բ» պարբերություններով սահմանված աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգման և սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարման, դիտարկումների իրականացման անմիջական կատարողներին:».

2) 24-րդ կետը լրացնել նոր՝ 13-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«13) Կոմիտեում հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային, քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձը պարտավոր է աշխատանքի ներկայանալիս Կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից նշանակված անձին ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը: Սույն կետում սահմանված պարտականությունները խախտող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է գրավոր բացատրություն:».

3) 35-րդ կետը լրացնել նոր՝ 1-ին ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1) համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված անձի վերաբերյալ տվյալները մեկօրյա աշխատանքային ժամկետում ներկայացվում են տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին կամ խախտում թույլ տված անձի անմիջական ղեկավարին (վերադասին), որն էլ պարտավոր է խախտման մասին մեկօրյա աշխատանքային ժամկետում տեղեկացնել կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող անձին:»:

2. Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Գագիկ Եգանյանին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում նշանակել սույն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերություններով նախատեսված աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգման և սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարման, դիտարկումների իրականացման անմիջական կատարողներին: Վերոնշյալ աշխատանքները կազմակերպել ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով

հաստատված N 1, N 3 հավելվածներով սահմանված Ձև 1-ին և Ձև 2-ին համապատասխան:

3. Կոմիտեի հանրային կապերի բաժնի պետին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումն Կոմիտեի պաշտոնական կայքում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Recoverable Signature

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393